



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 413 - Ա

24 հոկտեմբերի 2019 թ.

**ՅՈՒՐԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԶՈՒՐԱԲՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի Ն/3321-2019 զեկուցագիրը

կարգադրում եմ՝

1. Հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանին, քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանին և տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (411) տնտեսագիտական դասակարգման հոդվածի տնտեսված միջոցների հաշվին պարգևատրել մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումները:

24.10.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ